01/10.1/13741-10
2010-11-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանի, Լարիսա Ալավերդյանի, Ստյոպա Սաֆարյանի, Անահիտ Բախշյանի, Ռաֆֆի Հովհաննիսյանի և Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունն աշխատողների աշխատանքային իրավունքների արդյունավետ պաշտպանության, արժանապատիվ աշխատանքի պայմանների ապահովման առումով կարևորում է նվազագույն աշխատավարձի բարձրացումը։ Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նվազագույն աշխատավարձը 2011 թվականի համար սահմանել 32500 դրամ, որի համար հիմք է ընդունվել Հայաստանի

Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 859-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում 2011 թվականի համար նվազագույն աշխատավարձի նախատեսված չափը: Ընդ որում, միջնաժամկետ ծախսային ծրագիրը կազմվել է բազմակողմանի վերլուծությունների հիման վրա՝ հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները:

Նվազագույն ամսական աշխատավարձի չափը 45000 դրամ սահմանվելու դեպքում այն կհանգեցնի մակրոտնտեսական կայունության խախտման և զգալի լրացուցիչ ծախսերի:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի նիստում ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-997-08.10.2010-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի 1-ին հոդվածի «30000 դրամե բառերը փոխարինել «45000 դրամե բառերով։

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Գործավարձով եւ ժամավարձով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանել՝

աշխատաժամանակի նորմալ տեւողության դեպքում (40-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 269 դրամ.

աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 299 դրամ.

աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում (24-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 447 դրամ։ե։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության անհրաժեշտությունը պայմանավորվում է հետեւյալ հանգամանքներով.

Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված է 30000 դրամ, սակայն Հայաստանի Հանրապետության 2010 թվականի առաջին երկու եռամսյակների ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընթացիկ տարվա հենց սկզբում՝ հունվար-մարտ եռամսյակում, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը հասել է 40234.2 հազար դրամի, իսկ պարենային զամբյուղի արժեքը կազմել է 25957.6 հազար դրամ: 2010թ. հունվար-հունիս հաշվետվության արդյունքներով պարզվել է, որ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը հասել է 41052.4 հազար դրամի, իսկ պարենային զամբյուղի արժեքը կազմել է 26485.4 հազար դրամ:

Նշված փոփոխության համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված վերոգրյալ ցուցանիշները, ինչպես նաեւ՝ «Կենսապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսապահովման նվազագույն բյուջեի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի երրորդ կետը (ընդունված՝ 16.03.2004թ. ՀՕ-53) եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասինե Կոնվենցիայի 3-րդ հոդվածի «աե ենթակետի պահանջները, որոնք մասնավորապես ներկայացված են այսպես.

«Նվազագույն աշխատավարձի մակարդակի սահմանման ժամանակ հաշվի են առնվում ազգային գործելակերպին ու պայմաններին համապատասխան եւ ընդունելի այն գործոնները, որոնք ներառում են աշխատողների եւ նրանց ընտանիքների պահանջմունքները՝ հաշվի առնելով երկրում ընդունված աշխատավարձի ընդհանուր մակարդակը, կենսապահովման նվազագույն ծախսերը, սոցիալական նպաստները եւ սոցիալական այլ խմբերի կյանքի համեմատական մակարդակը:

Սույն օրենքի ընդունումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում աղքատության կրճատմանը եւ սոցիալական արդարության հաստատմանը: